**Հավելված N10**
**Շրջակա միջավայրի նախարարի**
**2020 թ. մարտի 24-ի N 107-Լ հրամանի**

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# ՀՈՂԵՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հողերի և ընդերքի քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Նախարարության խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում ապահովում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով, այլ օրենքներով, Նախարարության կանոնադրությամբ Նախարարությանը վերապահված հողերի և ընդերքի պահպանության, բարելավման, դրանց վրա բնական կամ մարդածին բացասական և վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման քաղաքականության մշակումը և իրականացումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով:

## III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) ընդերքօգտագործման ոլորտում շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական կորուստների կանխարգելման և նվազեցման, ընդերքօգտագործման թափոնների կառավարման ոլորտի սոցիալ-տնտեսական, գիտելիքահենք ու նորարար

նախաձեռնությունների վրա հիմնված պետական ծրագրերի, քաղաքականությունների և ռազմավարությունների մշակումը, ներդրման և իրականացման ապահովումը.

2) հողերի կայուն կառավարման համատեքստում հողերի օգտագործման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բնապահպանական սահմանափակումների կիրառումը, հողերի որակի վատթարացման, աղտոտման և դեգրադացիայի կանխման սոցիալ-տնտեսական, պետական ծրագրերի, քաղաքականությունների և ռազմավարությունների մշակումը, ներդրման և իրականացման ապահովումը.

3) հողերի և ընդերքի պահպանության տեսանկյունից լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման խթանման քաղաքականության մշակումը.

4) հողերի և ընդերքի պահպանության քաղաքականության ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

5) հողերի և ընդերքի վիճակի վրա վնասակար ներգործության և դրանց աղբյուրների բացահայտման, ուսումնասիրության և մոնիթորինգի (դիտանցի) չափորոշիչների մշակումը.

6) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար իրականացվող հատկացումների չափերի վերաբերյալ տեղեկատվական բազաների ստեղծումն ու վարումը.

7) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման իրականացման գործընթացին և ռեեստրի վարման մասնակցությունը.

8) սեյսմիկ և արտածին երկրաբանական երևույթների ռիսկի գնահատման համար օգտագործվող տվյալների բազայի ստեղծման և ընդլայնման, երկրորդային սեյսմիկ վտանգի գնահատման ընթացքում օգտագործվող տվյալների բազայի ընդլայնման ապահովմանը մասնակցություն.

9) ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների քննարկման մասնակցությունը.

10) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների վերջնական փակումից հետո ընդերքօգտագործողի փոխարեն ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման գործընթացի ապահովումը.

11) ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը.

12) ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների չիրականացման համար գրավոր զգուշացման և ֆինանսական երաշխիքով նախատեսված գումարի վճարման պահանջի ներկայացման գործընթացի ապահովումը.

13) ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը, թափոնների օբյեկտների փակման մասին որոշման ընդունման ապահովումը.

14) իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի նախագծի վերաբերյալ առաջարկությունների և կարծիքի տրամադրումը.

15) իր իրավասության սահմաններում հողերի ժամանակավոր սխեմաների համաձայնեցման գործընթացի ապահովումը.

16) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագրի և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչների համաձայնեցման գործընթացի ապահովումը.

17) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունման, դրանց վերաբերյալ միասնական համակարգի ստեղծման ու վարման մասնակցությունը.

18) հողերի պահպանությանը վերաբերող տեղեկատվության հավաքումը, տվյալների բազայի ստեղծումն ու վարումը.

19) Վարչության իրավասությունների շրջանակում կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակմանը ու իրականացմանը մասնակցության ապահովումը.

20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման աշխատանքներին մասնակցությունը՝ հողերի և ընդերքի պահպանության մասով,

21) հողերի և ընդերքի պահպանության ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

22) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում Վարչության գործառույթների մասով մասնագիտական կարծիքի տրամադրումը,

23) նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրման գործընթացին մասնակցությունը.

24) հողերի և ընդերքի պահպանության ոլորտի էկոլոգիական իրազեկման, մշակույթի, դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների, էկոլոգիական գիտության և կրթության ռազմավարության հիմնական ուղղությունների մշակման գործընթացին մասնակցությունը.

25) հողերի և ընդերքի պահպանության տնտեսական մեխանիզմների մշակման աշխատանքներինմասնակցությունը.

26) Վարչության իրավասությունների սահմաններում այլ մարմինների կողմից մշակված և Նախարարության համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների տրամադրումը.

27) Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների, և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին մասնակցությունը՝ հողերի և ընդերքի պահպանության մասով.

28) հողերի և ընդերքի պահպանության ոլորտում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակման և բյուջետային գործընթացի իրականացման աշխատանքներինմասնակցությունը.

29) քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին մասնակցության ապահովումը.

30) կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների և նախանիստերի օրակարգերում ընդգրկված հարցերը ուսումնասիրումը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը.

31) մասնակցություն հողերի և ընդերքի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը, ներկայացված հաշվետվությունների, նախատեսվող և/ կամ իրականացվող ծրագրերի վերաբերյալ կարծիքի տրամադրման գործընթացին.

32) Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին մասնակցությունը.

33) Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը.

33.1)Նախարարությանը վերապահված՝ ոլորտային կադաստրների վարման լիազորությունների շրջանակում, պատասխանատու ստորաբաժանումների կողմից տարածական տվյալների ֆոնդի ստեղծման, վարման, թարմացման, պահպանման և տեղեկատվության տրամադրման հետ կապված աշխատանքների համակարգումը.

34) Նախարարի, իսկ օրենքով սահմանված դեպքերում և իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում՝ նաև նախարարի տեղակալների և Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարումը.

35) իրավական այլ ակտերով Վարչությանը վերապահված գործառույթների իրականացումը:

## IV.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Նախարարության հաստիքացուցակով նախատեսված կազմով:

7. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

8. Վարչության պետն անմիջական հաշվետու է շրջակա միջավայրի նախարարին (այսուհետ՝ Նախարար):

9. Նախարարի հրամանով վարչության գործունեության համակարգումը կարող է վերապահվել Նախարարին կամ Նախարարի տեղակալներից մեկին:

10. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պաշտոնների դասակարգման համակարգում առավել բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնող վարչության այլ աշխատողը, ում պաշտոնի անձնագրով նախատեսված է վարչության/բաժնի պետին փոխարինելու իրավասություն, իսկ այս պայմանների հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողը, բացառությամբ այն դեպքերի, երբ Վարչության պետին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անհատական իրավական ակտով վարչության պետի փոխարինումը դրվել է Վարչության այլ աշխատողի վրա:

11. Վարչության պետի, վարչության այլ աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով: